

ԳԼՈՒԽ Ը Կ'ԱՆԳՈՒԱՐԻ ԱՍՈՒՐԸ

Այն միջոցին, որ Բերկրուոյ Արծրունեաց ապարանից մէջ, Յռիփսիմէ տիկին իւր ցաւած սիրտը աստուծոյ առջեւ կը տարածէր, Աշոտ իշխան իւր զուարճութեանց եւ իւր դիներ բուաց մէջ կը հրճուէր, Յովնան իւր լեռներուն ամրութիւնը բաւական չի գտնելով կ'աշխատէր, Վահրիճ ուրախ, զուարթ իւր կնոջ եւ զաւկներուն հետ կը պագտուէր: Վարագայ լեռան ստորոտէն բաժնուած հեծեալ մը իւր չայն մոխրագոյն վերարկուին փաթթուած, որ իւր սպառնազինութիւնքն կը ծածկէր եւ ցուրտէն կը պահպանէր՝ ծանր եւ մտախոհ կ'երթար դէպի խոյ: Թեպէտ եկեղեցի, խորան, սեղան չի կար իւր առաջ, այլ երկինք ամպամած եւ գետին ձիւնամած, բայց այդ մարդը երբեմն գլուխը երկինք կը վերցնէր, եւ իւր լայն կ'ուրծքէն մեծ հառաչանք մը կը հանէր, ապահով, որ ոչ ոք չէր կրնար լսել իւր սրտին տխուր ձայնը: Գուրգէնն էր այդ մարդը, որուն ծանր էր Վասպուրականի օդը, եւ որոշէր էր վայրկեան մը առաջ ձգել հեռանալ այն երկրէն, որ իրեն թշուառութեանը աղբիւր մը եղած էր: Թեպէտ անբժշկելի էր իր սրտին վերքը եւ իրեն համար չի կար բան մը բնութեան մէջ, որ զայն դարմանէր, բայց դարձեալ ինքնիրեն կ'ըսէր. «Անգամ մը եթէ զինք տեսնէի, անգամ մը եթէ սրտիս սա վերքը նորա առջեւ դնէի եւ նորա սիրտն էլ անգամ մը տեսնէի, եւ այնպէս հեռանայի սա երկրէն, երթայի Թորթում՝ փոխանակ երջանկութեան, որ երազէ է՝ ի ցաւագին կեանքս անցնելու, հեռու աշխարհքէն, որ զիս ծնաւ, հեռու անձէն առանց որոյ կեանքը տանջանք է մշտնջենականս:

Այդ եղանակին ուղեգնացութիւնը թէեւ զուարճալի չէր, բայց խանձեալ սրտի մը համար մարդկանցմէ հեռաւորութիւնն ու միայնութիւնը այնչա՛փ փափագելի էր, որ երբ ճանապարհին վրայ գիւղ մը կը հասնէր Գուրգէն՝ ժամ առաջ հեռանալ կը ջանար, որպէսզի խօսելու, պատասխանելու յարաբերութիւնն երէն ազատ մնա: Երկու-երեք գիշեր աննշան գիւղերու մէջ անցնելէ վերջը իւր ուղեգնացութիւնը, երբ խոյի մօտեցաւ եւ ճանապարհն երկուքի կը